

**ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԿԸ ՔԱՐՈՋԷ
ՎԵՆԹՈՒՐԱ ԳԱԻՈՒԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Կիրակի, Յուլիս 25ին, 2010 թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, ընկերակցութեամբ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեանի, մեկնեցաւ Վենթուրա Գառաւ եւ կէսօրին Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց: Սուրբ Պատարագի ասարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Ապա Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Ծխական Խորհուրդին հետ՝ Ատենապետութեամբ Տիար Կրէկ Շնաւունեանի: Սրբազան Հայրը իր ուղղութիւնները տուաւ եւ գնահատեց Ծխական Խորհուրդին կատարած նուիրեալ ծառայութիւնները: